

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

“ 11 ” հունվարի 2011թ.

№ 1 Ա


ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈՔՁԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001թ. հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի բ/ և դ/ կետերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010թ. նոյեմբերի 29-ի թիվ 72-Ա կարգադրությամբ՝ ա/թ նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 2-ը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Լորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանքի, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Լորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Հակոբջանյանին հայտարարել նկատողություն՝ կազմակերպության կանոնադրության 68-րդ կետի 11-րդ և 21-րդ ենթակետերի պահանջները ոչ պատշաճ կատարելու համար:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետ, ՀՀ Սյունիքի մարզի «Լորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացված ուսումնասիրության վերաբերյալ նյութերը:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին, ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:



Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
2011թ. հունվարի 11
ք. Կապան